ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի ԹԻՎ 106-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի (Հողմիկ բնակավայր) սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառուցված բնակելի շինությունները օրինական ճանաչելու և այն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը համարելու մասին» թիվ 106-Ա որոշման բովանդակությունը շարադրել նոր խմբագրությամբ.

« 1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականություն հանդիսացող /բնակավայր՝ Հողմիկ/ 08-066-0020-0006 կադաստրային ծածկագրով և 08-066-0020-0007 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապտման հողատեսքի 0,075144 հեկտար հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տուն 156,90 քառակուսի մետր մակերոսով, անասնաշենք 32,67 քառակուսի մետր մակերոսով, հացատուն 25,62 քառակուսի մետր մակերոսով և նկուղ 10,81 քառակուսի մետր մակերեսով շինությունները (հետագայում շինություն) ճանաչել օրինական, այն համարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

2. Օրինական ճանաչված և համայնքի սեփականություն համարված սույն որոշման 1-ին կետում նշված շինության և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասի՝ Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ձևին համապատասխան կազմված հատակագծերը և շինությունների բնութագիրը կցվում է սույն որոշմանը:
3. **Նշել, որ** օրինական ճանաչված շինությունը՝

- չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,
- չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,
- կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, այն կառուցված է քաղաքաշինական նորմերի ու կանոններին համապատասխան և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունմանմասինայն անձանց

առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է ակտը, եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ » :